ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 52

15.06.2023թ.

ք. Երևան

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/13217-2023, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.3/8635-2023, ՀՀ էկոնոմիկայի 03/9931-2023 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչությունների, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.1/6693-2023 և Կադաստրի կոմիտեի ԱԳ/7124-2023 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն **ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Չարենցավան համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից **0.07346 հա** այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 07-019-0201-0047) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Հ. Մկրտչյան

82